

Ե. ՎԵՐՆԵՐ

Ո՞ր է քանում հասարակութեան զարգացումը:

* *

*

Մի ժամանակ ստրուկներ և ճորտեր կային և մարդիկ երկու դասակարգերի էին բաժանու՝ ազատ տէրերի և անազատ ստրուկների ու ճորտերի: Թէ ինչ էին անում՝ ազատները իրենց ստորադրեալներին, այդ չենք պատմի. այդ թէ մի շատ տխուր պատմութիւն է և թէ երկար ժամանակ կիսէր խօսելու: Անցան այդ ժամանակները, անդարձ անցան և բոլոր մարդիկ «ազատութիւն» ստացան: Իրօք այդպէս է: Ամենեւին ոչ, և այդ դուք ինքներդ ձեզ վրայ փորձով դիտէք ու շատ լաւ էք հասկանում:

Նայեցէք ձեր շուրջը և կտեսնէք, որ շատ բան մեղանում՝ թէ և ճորտութիւն չէ, բայց այնուամենայնիւ նրանից է մնացել:

Ամեն մի վարչութիւն իսկապէս պիտի ունենայ մի միայն այնպիսի իշխանութիւն, որպէսզի իր օրինաւոր պահաւորութիւնները կատարէ: Ճիշտ է և այս, որ եթէ օրէնքները վատ են, ճնշող են, դրանից էլ օգուտ չկայ. պէտք է օրէնքները ազատ լինին: Բացի այդ հարկաւոր է, որ այդ օրէնքները լաւ կատարուեն, որ ժողովուրդը կարողանայ հետեւել նրանց խտնդարման և օրինական կարգով մաքառէ ամեն մի անարգարութեան դէմ: Այն ժամանակ իշխանութիւնն ի չարը չէր գործ դնի իր իրաւունքը՝ ճնշելու, հալածելու, վիրաւորելու ու բռնանալու:

Այսպէս են ազատ կարգերը: Դրանց այն ժամանակ կարելի է հաստատել, երբ օրէնքները ժողովրդից ընտրուած ներկայացուցիչներից կսահմանուին և երբ ժողովուրդը ինքն ամենայն կերպ միջոց կունենայ թէ իրեն պաշտպանելու և թէ իրեն չահերը: Իսկ այդ միջոցներից գլխաւորներն են — խօսքի ազատութիւնը և ազատ համախմբումը: Թող ամէն մէկը հնարաւորութիւն ունենայ ազատ խօսե-

լու, գրելու և այն ամէնը տպագրելու, ինչ որ գիտէ և մտածում է, որպէսզի ամեն անարդարութիւն, ամեն մի օրինազանցութիւն երևան գայ. թող ոչ ոք արգելք չլինի քաղաքացիներին մի տեղ ժողովուելու և իրենց հետաքրքրող գործերը քննադատելու, ինչպէս են՝ բանւորների ու կապիտալիստների մէջ եղած վէճերը, գիւղացիների ու կալուածատէրերի վէճը և ամեն տեսակ օրէնքները — հին լինին թէ նոր, թէ կառավարութեան բռնած ընթացքը և թէ ուրիշ պետութեանց հետ ունեցած քաղաքականութիւնը: Վերջապէս թող ամէն մէկը և ամենքն իրաւունք ունենան ազատ համախմբուելու, որպէսզի միասին աշխատեն իրենց նպատակներին հասնելու և իրենց շահերը պաշտպանելու — կցանկանան բանւորները բանթող լինել, որ ստիպեն կապիտալիստին օրավարձը բարձրացնելու, կցանկանան քաղաքացի այս ու այն դատակարգերը միութիւն կազմելու, որ օրէնսդրական ժողովի մէջ այս և ոչ այն ներկայացուցիչը ընտրուած լինի, այս և ոչ այն օրէնքները սահմանուեն ևն ևն:

«Ես էլ գիտեմ որ այդպէս է, կասէ մէկն ու մէկը. այդ ամէնը լաւ կլինէր, բայց կարելի է արդեօք այդ ամէնը գլուխ բերել»: Իհարկէ, կարելի է, թէև հեշտ չէ: Արեւմտեան պետութիւններում՝ ժողովուրդը զրեքէ այդպիսի կարգեր է ձեռք բերել: Ծիշտ է կան բաներ, որ պակասում են, բայց քիչ բան, այստեղ մի բան, մի այլ տեղ մի ուրիշ բան, բայց ընդհանրապէս այնտեղ իրենց ընտրած ներկայացուցիչների ձեռքով մշակուած օրէնսդրութիւն կայ, ինչպէս և խօսքի, համախմբման, պայքարի և միութեանց: Այդ ամէնը ժողովուրդը ձրի չէ ձեռք բերել — ազատութեան համար երկար ու կատաղի էր կռիւր և շատ տրիւն թափուեց: Իրա համար էլ նրանց կեանքը մերի պէս չէ, թէ աղքատները քիչ են, թէ օրավարձը աւելի բարձր է, թէ աշխատանքի ժամերը քիչ, թէ ամէնքն աւելի գիտութիւն ունին, որովհետև ժողովուրդը միջոց ունի ինքն իրեն համար հողալու, իր շահերը պաշտպանելու: Իսկ մի հարկւր տարի առաջ այնտեղ էլ միւսնայն

դրութիւնն էր, ինչպէս մեզանում է, որովհետեւ ժողովուրդը ոչ իրաւունք ունէր և ոչ էլ ոյժ։

Ինչ որ մի ժամանակ արեւմուտքում էր, նոյնը այժմ Ռուսաստանում է կատարւում... Հեռի չէ այն ժամանակը, երբ ամէնքն աւելի ազատ, աւելի թեթեւ կզգան իրենց։ Դրան քիչ մարդիկ կան, որ կատկածում են։

Բայց որպէսզի աւելի հաստատ հասնենք ազատութեան, և հասնելուց՝ աւելի լաւ կերպով օգտուենք նրանով, հարկաւոր է աւելի հեռուն՝ դէպ յառաջ նայել — արդեօք մի միայն ազատութեան մէջ է ամեն բան և նրանով ամեն բան վերջանում է։ Մարդկութիւնը հեռի ճանապարհ է գնում, որպէս զի նա չչեղուի մի կողմը, աւելորդ պտոյտներ չանէ, իզուր ուժերը չսպառէ, պէտք է պարզ ու լաւ գիտենայ, թէ որտեղ է գնում և մի իջեալից յետոյ որն է գալիս։

Ահա եւրոպական ազգերն ազատ օրէնքներ են ձեռք բերել, ինչ են մտածում նրանք, կանգ առնել արդեօք։ Ո՛չ, նրանք նոր կոիւ են մղում և այդ կոիւը առաջինից աւելի լուրջ են համարում։ Նրանք այլևս ինչ են ցանկանում, Ի հարկէ այն՝ ինչ որ պակասում է։ Արդեօք ազատ օրէնքները կատարեալ ազատութիւն են տալիս։ Տեսնենք։

Անգղիան աշխարհիս ամենաազատ երկիրն է գրեթէ։ Այնտեղ օրէնքները ժողովրդի ներկայացուցիչներն են դրնում, աստիճանաւորները զարմանալի բարեխիղճ են, դատաւորները անաչառ, ամեն տեղ բանւորական աշխատանքը — ինն ժամ, օրավարձը երեք-չորս անգամ աւել քան մեզանում, ժողովուրդը այնքան գիրք ու լրագիր է կարդում, որ մենք չենք էլ կարող երևակայել, իստքը և տպագրութիւնը ազատ են, ժողովրդական համախմբումները և ամեն ուղած գործերի մասին քննադատութիւն անելը ոչ մի արգելք չունի։ Այնուամենայնիւ այնտեղ էլ դեռ չէ կարելի ասել, որ երկրի վրայ դրախտ է, և եթէ լաւ զննելու լինինք, կտեսնենք, որ կատարեալ, իսկական ազատութիւնից Անգղիան էլ դեռ հեռի է։

Ահա անգղիական բանւորը, նա մեր ստորին աստի-

ճանաւորներէից լաւ է ապրում, բանում է օրական ինն ժամ գործարանում կամ արհեստանոցում: Ի՞նչ, միթէ նա այդ ինն ժամուայ ընթացքում ազատ է: Ո՛չ, նա կապիտալիստի տրամադրութեան տակ է, իր բանւորական ոյժը նրան է տւել: Ազատ ժամերը այնքան էլ շատ չեն: Բայց եթէ նա ցանկանար աւելին ունենալ, օրինակ մի միայն ութ ժամ բանել, որին առաջնակարգ բանւորները ձգտում են, այդ բանը նրան չեն տայ: Ո՞վ չէ տալիս: Կապիտալիստները: Ի՞նչու չեն տալիս: Որովհետեւ նրանք ուզում են շահուել, որչափ կարելի է աւելի շահ ստանալ: Նոյն և նման ինչպէս մեր կապիտալիստները, միայն այս տարբերութեամբ, որ նրանք աւելի քիչ են շահագործում բանւորներին, որովհետեւ իրենք բանւորները աւելի լաւ գիտեն դիմագրել քան մեզանում: Քանի որ շահագործումը գոյութիւն ունի, իսկական ազատութիւն չի լինի, որչափ էլ օրէնքներն ազատ լինին:

Բայց այդ քիչ է դեռ: Եթէ երբեմն բանւորին յաջողում է մի առ ժամանակ շահագործութիւնից ազատուել, այդ էլ միայն նրա համար, որ անգործութեան ճիւրաններին մատնուի: Եթէ բանւորը կապիտալիստի հետ համաձայնութիւն չէ կայացնում, նա արձակում է նրան — դնա փողոցը: Կապիտալիստի մօտ գործը ծանր է, օրավարձը քիչ, բանւորն աւելի լաւ պայմաններ է պահանջում, կապիտալիստները մերժում են — պէտք է գործադուլ անեն: Հազարաւոր բանւորներ ծախսում են վերջին խնայողութիւնը, կրում քաղց ու ցրտութիւն, միթէ այդ է ազատութիւնը: Լաւ է, որ կապիտալիստը զիջողութիւն անէ, բայց նա մեծ ուժ ունի, նա կարող է երկար դիմանալ: Նստ ժամանակ չէ, որ այսպիսի մի դէպք եղաւ. մի անգլիացի լօրդ-միլոնատիրոջ քարահանքի բանւորները գործադուլ արին. գործադուլ արին նրա համար, որ նա թոյլ չէր տուել համախմբուելու, միութիւն կազմելու, և արձակել էր ամենքին, որոնք չէին հնազանդուել. $2\frac{1}{2}$ տարի գործադուլ անողները դիմացան, շնորհիւ գրեթէ ամբողջ Անգլիայի ընկեր-բանւորների օժանդակութեան և թէ այլ

բարի մարդոց օգնութեան, բայց լօրդը այնուամենայնիւ չզիջաւ. նրա համար տարին մի քանի տասնեակ կամ հարիւր հազարներ փնտս ստանալը նշանակութիւն չունէր. նրա կարողութիւնը այնքան մեծ էր:

Լինում է և այսպէս. կապիտալիստի գործերը լաւ չեն գնում և նա ստիպուած է իւր ձեռնարկութիւնը կրճատել և փողոց ձգել հարիւր ու հազար բանւորներ՝ մինչև անգամ իր կամքի հակառակ: Իսկ ճգնաժամերի ժամանակ, երբ բոլոր արդիւնազորութեանց մէջ գործերը սաստիկ վատանում են, հարիւրաւոր կապիտալիստներ ստիպուած են լինում նոյնն անել, և շատ ձեռնարկութիւններ բոլորովին փակուում են: Այդ ժամանակ ահա սկսում է ընդհանուր սարսափելի անգործութիւնը. իսկ նրանք, որ դեռ գործ ունին, պէտք է համաձայնուեն բանելու ցած օրավարձով, որը կապիտալիստներն են նշանակում. այդտեղ ահա գործադուլները գործին չեն օգնում: Հէնց այդպիսի մի ճգնաժամի էլ Ռուսաստանը 1899 թուականին հանդիպեց, որ մինչև այսօր դեռ չէ վերջանում:

Եւ վերջապէս առանց ճգնաժամի էլ պէս պէս գործերի մէջ եղող շատ բանւորների համար կարող է գործ չգտնուել. հէնց մէկը նրա համար, որ մի նոր մեքենայ է լոյս ընկել, որ նրանց փոխարինում է, մեքենան պէտք է բանւորների գործին օգնէ, նրանց աշխատութիւնը թեթեւցնէ. իսկ այստեղ նա միայն նրանց հացն է կտրում, նրանց զրկանք պատճառում և կապիտալիստին օգնում՝ բանւորներին իր պահանջներին հպատակեցնելու:

Առհասարակ ինչ կողմից էլ բանւորի դրութիւնը չքննադատենք, կտեսնենք որ նրան ամեն կողմից անապահով վիճակ է սպառնում. նրա կեանքի մէջ մի օր չկայ, որ նա կարողանայ իր դրութիւնը հաստատ ու յուսալի համարել: Իսկ երբ ապահովուած չէ, էլ ինչ ազատութիւն, միթէ նա կարող է խաղաղ իր ուզած գործը չինել, երբ գիտէ որ իր վիճակը կախուած է թէ կապիտալիստից, թէ շուկայում իր դրած աշխատանքի պահանջից, թէ առևտրի

ճգնաժամից, թէ մեքենայից և թէ հազար ու մի պատահաւորից: Այդ աղատութիւն չէ, այլ ծանր գերութիւն, իզուր չեն մի քանի դիտականներ ընդունում, որ ժամանակակից վարձովի աշխատութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ թեթեցրած սարկութիւն:

Այո, այժմեան հասարակութեան մէջ միայն բանւորների համար չէ անապահով վիճակը: Նոյնը և մանր արհեստաւորների կամ տնայնագործների վերաբերութեամբ է, որոնք իրենց ձեռքի աշխատութեամբ արտադրած ապրանքը ծախելովն են ապրում: Կյաջողի՞ արդեօք վաճառել և ինչ գնով, չէ որ այդ նրանից չէ կախուած, այլ պահանջից, շուկայից, այնտեղ նրան հակառակորդ է դուրս գալիս և խոշոր կապիտալիստը, որ մեքենաների միջոցաւ արտադրում է նոյն բաները և առանց վնաս կրելու կարող է այն աստիճան գները պակսեցնել, որ տնայնագործը կամ մանր արհեստաւորը անկարող է այդ գներով ապրել, տուն կռաւիարել: Անապահով է և գիւղականը, որ իր հացը շուկայ է հանում՝ ծախելու. թէ քանով կծախէ — այդ նրանից չէ կախուած. դեռ վաշխառու մարդիկ նրա ետեւից ընկած՝ յարմար ըռպէին են սպասում, որ նրան ճանկեն և տօկոսներով խեղճացնեն: Մինչև անգամ միջին և ստորին կարգի կապիտալիստները չեն կարող վստահ լինել վաղուայ վրայ. ապրանքների գները կընկնեն, պարտքատէրերը իրար կանցնեն, ամէնքը դանակները նրա կոկորդին կդնեն. եթէ չկարենայ նրանց վճարելիք դումարը առձեռն դրամով վճարել, նրա բանը վերջացած է, նա սնանկացաւ:

Կապիտալիստ հասարակութիւնը հալածում է բանւորին, միւս գափակարգերն էլ ոչ կատարեալ աղատութիւն ունին, ոչ հանգիստ կեանք, և դրան անգղիական աղատ օրէնքներն անգամ չեն կարողանում արգելել. նրանք միայն կարող են թեթեցնել և ոչ թէ ընդհանուր այդ կախում ունենալը ոչնչացնել: Բանը ինչու՞մն է, ինչով կարելի է օգնել, ինչպէ՞ս կատարեալ, իսկական աղատութիւն ձեռք բերել: Աղատ բանւորը կախումն ունի կապիտալիստից՝ բանւորական ուժի պահանջից, իսկ կապիտալիստը և միւս

արհեստավորները կամ գործարանատէրերը ապրանքի վաճառումից, հէնց դրա մէջ է և գործի էութիւնը, հէնց այդ կախում ունենալը պիտի ոչնչացնել, Բայց ինչպէս ոչնչացնել և միթէ կարելի բան է այդ։

Կար ժամանակ, երբ ոչ կապիտալիստներ կային և ոչ շուկաներ, մարդիկ ապրում էին փոքրիկ հասարակութիւններ՝ ցեղեր, կազմած, մի քանի տասնեակ կամ մի քանի հարիւր մարդ միասին։ Ամեն մի այդպիսի ցեղ ոչ այլ ինչ էր, եթէ ոչ մի մեծ բաղամարդ ընտանիք՝ միևնոյն պապերի սերունդներ։ Այդ ընտանիքի բոլոր անդամները միասին էին աշխատում, միասին կեանքի համար կարևոր բաները ձեռք բերում և եղբայրաբար իրենց մէջ բաժանում։ Նրանք ոչ մի բան չէին ծախում, ոչ մի բան գնում, ապրում էին նրանով, ինչ որ ընդհանուր աշխատանքով ձեռք էին բերում։ Միայն այդ կեանքը շատ աղքատիկ էր, չկային թէ լաւ գործիքներ և թէ մեքենաներ, և օրտեղից կարող էին ունենալ, քանի որ ամեն բան ձեռքով էր պատրաստում։ Իսկ վատ ու աննշան գործիքներով շատ բան չէին կարող անել, մանաւանդ, եթէ մի քանի տասնեակ մարդիկ հարիւրաւոր զանազան գործեր պիտի կատարէին, իրենց համար իրենց անձնական աշխատութիւնը գործ դնելով՝ պատրաստելու թէ գործիք, թէ զէնք, թէ կերակուր, թէ զգեստ, թէ տուն և թէ զարդարանք։ Չկար ոչ տէր և ոչ ստրուկ, ոչ կապիտալիստ և ոչ վարձկան բանւոր, բայց և այնպէս ազատութիւն էլ չկար, ինչ ազատութիւն, երբ ամէնքը կիսակենդան, ամբողջ ժամանակը ուժասպառ են լինում մի կերպ ապրելու։ Ներկայ մարդկանց կողմից յիմարութիւն կլինէր այն ժամանակուայ կարգերին նախանձելը։

Ինչու այժմ մարդիկ, թէև առաջուայ եղբայրութիւնը չունին, բայց և այնպէս աւելի լաւ պայմանների մէջ են ապրում։ Նրա համար, որ այժմ ոչ թէ տասնեակ կամ հարիւրաւոր մարդիկ են միասին աշխատում, այլ միլիոնաւոր մարդիկ մէկմէկու համար բանում։— Այդ ինչպէս։ Միթէ ներկայ ժամանակներում ամէն մէկը մի միայն իր

համար չէ հոգում։—Այո, իր համար է հոգում, բայց ուրիշների համար աշխատում։ Տեսնենք այդ ինչպէս է լինում։

Բանւորը շուկայում շապկի համար չիթ է գնում և վճարում է յիսուն կոպէկ։ Այս յիսուն կոպէկը նա վաստակել է իր գործ դրած աշխատութեամբ, նա յիսուն կոպէկով չէ կարող ինքն այդ չիթը շինել։ Իսկ ով է չիթը շինում։ Ուրիշ բանւորներ։ Ի՞նչ բանւորներ։ Ահա որոնք։ Թուրքեստանում կամ Հնդկաստանում, ինչպէս և հեռի Ամերիկայում կամ հէնց մեր Կովկասում՝ մարդիկ բանում են բամբակի ցանքսերում, վարում, ջրում, քաղհանում, բամբակը հաւաքում, սերմից մաքրում։ Այդ բամբակը ուրիշ մարդիկ գնելով ուղարկում են հազարաւոր վերստ հեռու բամբակեղէնի գործարանները, որտեղ բամբակից թել են մանում, թելից կտաւ գործում, այդ կտաւի վրան զանազան նախշեր տալում։ Եւ այդ գործարանների բոլոր բանւորները այդպիսով մասնակցում են այդ չիթի պատրաստութեան, ինչպէս և նրանք, որոնք այդ ապրանքը մի գործարանից միւսն են փոխադրում և վերջը շուկան հասցնում։ Մարդիկ բոլոր գործարաններում զանազան մեքենաների ու գործիքների միջոցաւ են աշխատում, այդ գործիքները ու մեքենաները շինուել են զանազան տեղերի մեքենաներ ու գործիքներ պատրաստող բանւորների ձեռքով և ուրիշ բանւորների միջոցաւ տարուել բամբակեղէնի գործարանները. պարզ է որ այդ «մշակներն» էլ աշխատանք են գործ դրել այդ միևնոյն չիթի կտորի վրայ։ Թէ գործիքները և թէ մեքենաները երկաթից և ուրիշ մետաղներից են շինուած և դրանց վրայ գործ է դրուել քարածուխ, քսելու իւղ և ուրիշ նիւթեր։ Երկաթը հանքերից են հանել և դրա վրայ աշխատել են մի կարգ բանւորներ, ուրիշները նրան հալել են երկաթեղէնի ու թիթեղի ձուլարաններում։ Ածուխը ածխահանքերից հանել են ածխագործները, իսկ իւղը ստացել են նաւթից նաւթագործարաններում ուրիշ բանւորներ։ Պարզ է, որ դրանք էլ իրենց աշխատութեան մի մասը մտցրել են այդ չիթի արտադրութեան մէջ։ Իսկ երկաթուղիները, շոգենաւերը, որոնց

միջոցաւ տեղից տեղ են փոխադրել և բամբակը և մանածը և երկաթը և իւղը, չէ որ դրանք էլ առանց աշխատանք գործ դնելու գլուխ չէին գայ ու հազարաւոր վերստ տարուիլ կամ նաւագործարաններում շինուիլ: Եւ այն ամէնքը, որ դրանց վրայ աշխատել են, օգնել են նրանց, որոնք չիթն են պատրաստել. թէև քիչ մաս են ունեցել, բայց և այնպէս աշխատել են: Այդ բոլոր թուած աշխատաւորներին իրենց աշխատելու միջոցին պէտք էր կերակրել, հագցնել. առանց դրան նրանք ոչ աշխատելու ոյժ կ'ունենային և ոչ էլ գործ: Ասել է, որ այն ամէնքը, որոնք նրանց կերակրել են ու հագցրել, նոյնպէս մասնակցել են չիթի պատրաստութեան, որովհետեւ առանց դրանց չիթ չէր ստացուիլ: Իսկ ով է նրանց կերակրել ու հագցրել, Գիւղացիք մշակել են հացաբոյսերը, տաւարը կերակրել մսացու պատրաստել, բանջարանոցներում պարտիզպանները բանջարեղէն են վարել, միւս բանւորները պատրաստել են չիթի ու բրդի գործուածները, կարել են կոշիկներ ու հագուստներ, միւսները տներ են շինել թէ բանւորների կացարանների համար և թէ գործարանների, ուր բանել են: Եւ դրանք ամէնքն էլ յայտնի է, որ անհրաժեշտ մասնակցողներ են դարձեալ այդ չիթի աշխարհ գալուն: Այսպէս մինչև վերջը քննելով, դուք կտեսնէք, որ չիթը ոչ թէ մի կամ մի քանի մարդկանց գործ է, այլ ամբողջ բանւոր հասարակութեան: Այդպէս էլ եթէ վերցնենք մի ուրիշ ապրանք, դարձեալ նոյն եղրակացութեան կգանք:

Բոլոր աշխատաւորները անդադար բանում են մէկի համար և ամէնքի համար, միայն բացի դրանցից կան և այնպիսիք, որ այդ ընդհանուր գործին չեն մասնակցում, բայց ձրի օգտուում են նրա արդիւնքով:

(Շարու հակելի):

